ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մենք պետք է ճիշտ ընկալենք մեր երկրում ստեղծված իրավիճակը, և այն ծառայեցնենք ոչ թե մեր անձնական շահին, այլ՝ ժողովրդի: Ես հենց այս գիտակցումով եմ ստանձնել Արմավիրի մարզպետի պաշտոնը և իմ պաշտոնավարման ընթացքում 24 ժամ եղել եմ մարզի ազգաբնակչության կողքին՝ փորձելով լուծում գտնել նրանց տարաբնույթ խնդիրներին»

***

ՀՀ Արմավիրի մարզպետ Գագիկ Միրիջանյանն ամփոփում է հունիսի 8-ից սեպտեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում մարզպետարանի գործունեության հիմնական ուղղությունները, իրականացված աշխատանքները և նախատեսվող ծրագրերը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քարտուղարություն

- ***Առաջնային է անձի իրավունքների իրականացումը և պահպանումը, բնակչության հետ մարզպետարանի կապերի ամրապնդումը***

աշվետու ժամանակահատվածում ՀՀ Արմավիրի մարզպետարան է մուտքագրվել ընդհանուր թվով 9455 փաստաթուղթ, առաքվել՝ 3035-ը:

Նախապատրաստվել և անցկացվել է մարզպետի կողմից մարզպետարանում հրավիրված մարզի խորհրդի 2 և զորակոչային հանձնաժողովի 2 նիստ և 15 խորհրդակցություն:

Մարզպետի կողմից ընդունվել է 205 որոշում, արձակվել՝ 85 կարգադրություն:

Այս ամիսներին քաղաքացիներից ստացվել է ընդհանուր թվով 1787 նամակ, որոնց տրվել է ՀՀ օրենսդրությանը համապատասխան ընթացք և լուծում:

Մարզպետի մոտ յուրաքանչյուր ամսվա հինգշաբթի, ինչպես նաև արտահերթ կազմակերպված ընդունելությունների օրերին մասնակցել է ընդհանուր թվով 682 քաղաքացի, որոնց կողմից բարձրացված հարցադրումները ևս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել են հնարավոր լուծումներ:

Մարզպետի մոտ կազմակերպված յուրաքանչյուր ընդունելությունից հետո ապահովվել է բարձրացված հարցերի քննարկման արդյունքների մասին տեղեկատվության հրապարակումը մարզպետարանի պաշտոնական կայքի միջոցով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անձնակազմի կառավարում

- ***Ապահովել կադրային քաղաքականության բաց և թափանցիկ իրականացումը***

2018 թվականի սեպտեմբերի 18-ի դրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետարանում առկա է 129 հաստիքային միավոր, որից 109-ը քաղաքացիական ծառայության պաշտոն է:

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատվել է 5 քաղաքացիական ծառայող, 3 հայեցողական պաշտոն զբաղեցնող անձ, քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն որոշակի ժամկետով զբաղեցնելու նպատկով պայմանագիր է կնքվել 3 անձի հետ: Ոչ քաղաքային ծառայողների հետ կնքվել է 7 անորոշ ժամկետով և 3 ժամկետային աշխատանքային պայմանագիր, լուծվել՝ 6 անորոշ ժամկետով կնքված պայմանագիր:

ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշման համաձայն՝ քաղաքացիական ծառայության ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու համար մարզպեարանի աշխատակազմում հայտարարվել է 9 մրցույթ՝ 6 պաշտոնի համար, որի արդյունքում ժամկետային աշխատանքային պայմանագիր է կնքվել 4 անձի հետ:

Սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը:

ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարվել է 2 մրցույթ,

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

կնքվել է 1 պայմանագիր, լուծվել՝ 6-ը, կազմվել և վարվել են անձնական գործերը:

Մրցույթ է հայտարարվել <<Քեվորք և Անիթա Փակումեանների հիշտակի <<Հիսուսի մանուկներ>> առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար, որը կկայանա 2018 թվականի սեպտեմբերի 27-ին: Իսկ <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ գործադիր տնօրենի պաշտոնակատարն ազատվել է զբաղեցրած պաշտոնից, և նշանակվել է նոր պաշտոնակատար՝ մինչև տվյալ պաշտոնի համար մրցույթի արդյունքում նշանակում կատարելը:

Սահմանված կարգին համապատասխան՝ մրցույթների մասին հայտարարությունները հրապարակվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան էջում, փակցվել է նաև մարզպետարանի հայտարարությունների ցուցատախտակին և ներկայացվել է պատկան գերատեսչություններին:

Իրավական կարգավորում

- ***Իրավական գործընթացներն ապահովել՝ խստագույնս պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները***

Հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստվել և մարզպետի, ինչպես նաև աշխատակազմի ղեկավարի հաստատմանն է ներկայացվել համապատասխանաբար 205 որոշում, 85 կարգադրություն և 146 հրաման:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործնական աշխատանքներ են տարվել մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավար մարմինների կողմից ընդունված իրավական ակտերն ուսումնասիրելու և գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրելու ուղղությամբ, որոնց արդյունքում պատրաստվել են բազմաթիվ առարկություններ՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին օրենսդրությանը հակասող որոշումները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին:

Վերահսկողություն է իրականացվել հողային օրենսդրության շրջանակներում համայնքների ղեկավարների կողմից նրանց տնօրինության ներքո գտնվող հողերի աճուրդային կարգով իրացման, վարձակալության տրամադրելու գործընթացի նկատմամբ: Իրավական վերահսկողություն է իրականացվել համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից ընդունված իրավական ակտերի նկատմամբ: Տարածքային կառավարման և զրագացման նախարարի 2018 թվականի հունվարի 19-ի N 15-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2018 թվականի աշխատանքային ծրագրով իրավական և մասնագիտական հսկողություն են իրականացվել մարզի թվով 15 համայնքում:

ՀՀ Արմավիրի մարզպետարան ներկայացված մի շարք դիմում-բողոքների հիմքով և լիազոր մարմնի համաձայնությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան որոշումներով ստեղծված աշխատանքային խմբերն իրավական և մասնագիտական հսկողություն են իրականացրել նաև Վաղարշապատ (Էջմիածին), Դալարիկ, Եղեգնուտ, Գեղակերտ, Արևաշատ, Արշալույս, Ջրառատ, Նոր Արմավիր համայնքներում:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով այն համայնքներում, որտեղ ավարտվել են իրավական և մասնագիտական

հսկողության աշխատանքները, դրանց արդյունքները քննարկվել են համայնքներում հրավիրված ավագանու նիստերի ընթացքում, իսկ հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրությունները հրապարակվել են մարզպետարանի պաշտոնական կայքում (http://armavir.mtad.am/administrative-control-record/):

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողությամբ արձանագրված իրավական և ֆինանսական հետևանքներ առաջացնող իրավախախտումներին համարժեք գնահատականներ տալու նպատակով համապատասխան նյութերն ուղարկվել են իրավապահ մարմիններին: Իսկ աշխատանքային խմբերի կողմից արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ավագանիների կողմից նախատեսվող աշխատանքներն ընթացքի մեջ են:

Իրականացված հսկողության արդյունքում արդեն 2 համայնքի բյուջե է մուտքագրվել 2680.0 հազար դրամ.

- Դալարիկ՝ 680 հազար դրամ
- Արշալույս՝ 2 մլն դրամ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հողաշինություն և հողօգտագործում

- ***Մարզում հողային հարաբերությունների պատշաճ վերահսկողության ապահովում***

Հաշվետու ժամանակահատվածում հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով սահմանված կարգով ՀՀ կառավարություն են ներկայացվել մարզի Քարակերտ, Ծիածան, Տալվորիկ, Հացիկ, Արմավիր, Լեռնագոգ և Արգավանդ համայնքներում հողերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ հողաշինական գործերը: Արմավիր, Լեռնագոգ և Արգավանդ համայնքների հողաշինարակական գործերի վերաբերյալ Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրվել են դրական եզրակացություններ, որոնք ներկայացվել են համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով համաձայն ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1918-Ն որոշման ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ: Հողաշինարարական մյուս գործերը համաձայնեցման փուլում են:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> N186-Ն հրամանի դրույթների՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել Հ Հ Արմավիրի մարզի Ակնաշեն և Գայ գյուղական համայնքների կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման առաջարկությունները: Ստացված համապատասխան եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին:

Մարզպետարանում ստեղծված աշխատանքային խմբերի կազմում իրավական և մասնագիտական վերահսկողության գործընթացում մարզի Էջմիածին, Եղեգնուտ, Արշալույս, Ջրառատ և Գեղակերտ համայնքներում բացահայտվել են հողօգտագործման

ոչ ճիշտ նպատակային նշանակության օգտագործման, ինչպես նաև ապօրինի հողօգտագործման և ինքնակամ շինությունների դեպքեր, որոնք իրականացվել են նշված համայնքների ղեկավարների ոչ պատշաճ վերահսկողության արդյունքում: Գրանցվել են ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ և 101-րդ հոդվածների պահանջների կոպիտ խախտումներ:

Հաշվարկվել են ապօրինի շինությունների օրինականացման ծախսերը, որոնք կազմել են մոտավորապես 210 միլիոն ՀՀ դրամ:

Գայ համայնքում գործող գյուղատնտեսական շուկայի տարածքի (մոտ 6.5 հա) նպատակային նշանակության փոփոխության արդյունքում 1.1989 հա-ի համար կազմող կադաստրային արժեքի տարբերությունը՝ 59 մլն 800.000 դրամ, մուտքագրվել է համայնքի բյուջե:

Զարգացման ծրագրեր, զբոսաշրջություն և վերլուծություն

- ***Ամենասեղմ ժամկետում ունենալ համակողմանի զարգացած մարզային տնտեսություն***

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարությունից բխող 2018 **թվականի** գործունեության ծրագրի իրականացման կիսամյակային մոնիտորինգային հաշվետվությունը՝ համապատասխան հավելվածներով (http://armavir.mtad.am/razmavarutyun/):

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ մարզերում տնտեսական ակտիվությունը խթանելու, դրան ուղղված տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը նախաձեռնել է ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային–գործարար ծրագրերի հարթակի ստեղծում: Նախաձեռնության շրջանակներում տարբեր ծրագրային գաղափարներով մարզպետարան են դիմել գործարարներ, անհատներ: Մարզպետարանի անմիջական աջակցությամբ կազմվել են ընդունված ձևաչափին համապատասխան շուրջ 40 ներդրումային առաջարկներ, որոնցից 15-ը ներկայացվել է Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, հրապարակվել է նաև մարզպետարանի կայքում (http://armavir.mtad.am/investmentproject/):

Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել նաև մարզի համայնքներում առաջնային լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ համապատասխան ձևաչափով հավաքագրված և ամփոփված տեղեկատվությունը:

Մարզում հետևողական աշխատանքներ են իրականացվել համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացում: Սահմանված կարգին համապատասխան ավարտվել է համայնքներից սուբվենցիաների հայտերի հավաքագրման և Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացման փուլը: Ընդհանուր առմամբ ՀՀ Արմավիրի մարզի համայնքներից ներկայացվել է 19 ծրագրային հայտ, որից 8-ը հավանության է արժանացել գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի ընթացքում.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքը	*Սուբվենցիայի ծրագիրը*	*Ծրագրի ընդհանուր բյուջեն /ՀՀ դրամ/*	*Համայնքի ներդրումը /ՀՀ դրամ/*	*Պետական ներդրումը /ՀՀ դրամ/*
Ջրարբի	Համայնքի գործարար կենտրոնի բարեկարգում	13,886,000	8,332,000 60%	5,554,000
Դալարիկ	Շահումյան փողոցի ասֆալտապատում	11,518,000	7,550,000 65.5%	3,968,000
Եղեգնուտ	Համայնքի ջրահամակարգի վերակառուցում և ջրաչափերի տեղադրում	38,369,097 որից՝ 22,940,097 ԱՄՆ ՄԶԳ, Ուրբան	9,429,000	6,000,000
Փարաքար	Կոյուղատար համակարգի և ոռոգման ցանցի գործարկում	48,819,000	24,600,000 50.39%	24,219,000
Արագած	Համայնքի հանդիսությունների սրահի կահավորման	12,500,000	7,500,000 60%	5,000,000

	համար գույքի և էլեկտրատեխնիկայի ձեռք բերում			
Լուսագյուղ	Համայնքի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատում	48,485,000	29,091,000 60%	19,394,000
Արգավանդ	Ոռոգման խորքային հորի վերականգնում և հոսանքազծի կառուցում	11,283,120	5,000,000 44.3%	6,283,120
Ակնալիճ	Շահումյան փողոցի ասֆալտապատում	32,848,520	19,709,112 60%	13,139,408
	Ընդամենը	**217,708,737**	**111,211,112**	**83,557,528**

Մարզպետի որոշմամբ ստեղծվել է մշտադիտարկման աշխատանքային խումբ՝ հավանության արժանացած սուբվենցիայի ծրագրերի մրցույթային գործընթացի, պայմանագրերի կնքման աջակցության, մշտադիտարկման, փաստացի կատարված աշխատանքների քանակի և որակի ճշտման այցելություններ կատարելու նպատակով:

Կառավարության 2018 թվականի հուլիսի 26-ի թիվ 920-Ն որոշմամբ ՀՀ համայնքներին 2018 թվականի պետական բյուջեով արդեն իսկ նախատեսված սուբվենցիաներից բացի այլ սուբվենցիաներ տրամադրելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետարանին հատկացվել է 5,109.1 հազ. դրամ՝ Ջրարբի

համայնքի գործարար կենտրոնի բարեկարգում՝ ասֆալտապատում ծրագրի համար:

Արմավիրի մարզի և այլ երկրների համապատասխան տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ նախկինում հաստատված կապերով զարգացմանն ուղղված համագործակցության աշխատանքների շարունակության նպատակով համապատասխան գրություններ են ուղարկվել Իտալիայի Հանրապետության Վենետոյի, Ռումինիայի Կլուժի նահանգային խորհուրդի, Չեխիայի Մորավիա-Սիլեզիայի մարզի, Սլովակիայի Տրնավայի ինքնավար մարզի, Իրանի Արևմտյան Ատրպատականի նահանգի, ՌԴ Տվերի նահանգի, ՌԴ Յարոսլավի մարզի, ՌԴ Վոլոգդայի մարզի տարածքային միավորներին, որոնցից ստացվել են դրական պատասխաններ:

2018 թվականի հոկտեմբերի 7-12-ը Երևանում կայանալիք Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների 17-րդ գագաթնաժողովի նախապատրաստման շրջանակներում Ֆրանկոֆոնիայի ավանում կազմակերպվող Արմավիրի մարզի տաղավարի բովանդակային ներկայացման և մատուցման վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Մարզպետարանում այժմ շարունակվում են կազմակերպչական աշխատանքները՝ տվյալ միջոցառմանը մարզը պատշաճ ներկայացնելու համար:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղաքաշինություն

- ***Մարզային կրթական, առողջապահական, մշակութային հաստատությունները դարձնել առավել բարեկարգ և նպաստել ենթակառուցվածքների զարգացմանը***

Իրականացվել է մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներին ուղղված շինարարական ծրագրերի առաջնահերթության գնահատումը, որի արդյունքում համայնքներից ներկայացված շինարարական ծրագրերից 22-ը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից: Համապատասխան ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն արդեն ընթացքի մեջ են:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի պատվիրակմամբ շարունակվում են Թահիրովի միջնակարգ դպրոցի հիմնանանորոգման աշխատանքները՝ կառավարության կողմից հատկացված 125 մլն դրամի շրջանակներում: Ընթացքի մեջ է նաև Շենիկ համայնքի մշակույթի տան վերանորոգումը, որի համար էլ կառավարությունն հատկացրել է շուրջ 18.5 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում համակարգվել է համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների փաստաթղթաշրջանառության վերահսկողությունը: Համայնքների կողմից տրամադրվել է 92 շինարարության թույլտվություն և 28 փաստագրման ակտ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Արմավիրի մարզետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում կատարվել է 2018 թվականի օգոստոսի 10-ին ուժեղ քամու, կարկուտի հետևանքով ՀՀ Արմավիրի մարզի մի շարք համայնքներում շենք-շինություններին պատճառված վնասի ուսումնասիրության, չափագրման և գնահատման աշխատանքներ, որը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, արտակարգ իրավիճակների նախարարություններին:

Մարզի համայնքների սանիտարական մաքրման և աղբահանության վիճակի վերահսկման նպատակով պարբերաբար ստուգայցեր են կատարվել համայնքներ:

Բնակավայրերի մաքրման և աղբահեռացման ուղղությամբ Արմավիրի մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից պարբերաբար ստուգայցեր են կատարվել համայնքներ և տեղ գտած թերությունների վերացման նպատակով համապատասխան առաջարկություններ են արվել համայնքների ղեկավարներին՝ կազմակերպելով և համակարգելով վերջիններիս գործունեությունը տվյալ ոլորտում:

Համատարած մաքրման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել սեպտեմբերի 8-ին և 15-ին տեղի ունեցած շաբաթօրյակների ընթացքում, որոնց մասնակցել են տարբեր կառույցներ ներկայացնող 77 345 աշխատակիցներ, այդ թվում՝ դպրոցականներ: Մաքրման և բարեկարգման աշխատանքների կազմակերպման նպատակով ներգրավվել է ընդհանուր հաշվով 259 միավոր տեխնիկա՝ ինքնաթափեր, բարձիչներ, էքսկավատորներ, կցասայլեր:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ճանապարհաշինություն

- ***Մեզանում գերխնդիր է ճանապարհների բարեկարգումը և անվտանգ երթևեկության ապահովումը***

Մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 617,2 կմ, որից՝ միջպետական նշանակության՝ 123,2 կմ, հանրապետական նշանակության՝ 91,6 կմ և մարզային նշանակության՝ 402,4 կմ:

Հաշվետու ժամանակահատվածում հետևողականորեն իրականացվել է ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով մարզի տարածքում ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի դեպքերի գույքագրում:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն է ներկայացվել միջնորդություններ Բագարան-Երվանդաշատ 6 կմ, Զարթոնք-Արտաշար-Եղեգնուտ 11.1 կմ, Վաղարշապատ-Արտիմետ-Խորոնք-Տարոնիկ 4 կմ մարզային նշանակության ճանապարհների վերանորոգման վերաբերյալ:

Մարզի բնակավայրերում երթևեկության անվտանգության բարելավման և ճանապարհատրանսպորտային պատահարների նախականխման նպատակով Ճանապարհային ոստիկանության հետ համաձայնեցվել և մշակվում են երթևեկության կազմակերպման սխեմաները:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջիկայում նախատեսվում է 9,8 կմ երկարությամբ 2 մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգում՝ շուրջ 1 մլրդ 14 մլն դրամի շրջանակում.

- Տ-3-5/ <<Մ-5-Սարդարապատ-Նոր Արմավիր-Ս-3-52>>
- Ս-3-9 <<Լուկաշին-Հ-17>>

Գյուղատնտեսություն

- ***Բանջարբոստանային կուլտուրաների մշակության ճիշտ պլանավորում***

Հաշվետու ժամանակահատվածում խոշոր և մանր եղջերավոր անասունների հակահամաճարագային պատվաստումները ժամանակին և պատշաճ ձևով կազմակերպելու առնչությամբ մարզպետի միջնորդությամբ և հանձնարարությամբ մարզի բոլոր համայնքներում անասնաբուժական ծառայություններ իրականացնող մասնագետների և տվյալ համայնքի ղեկավարի միջև կնքվել է 45 պայմանագիր:

Մարզում վերջին ամիսներին տեղացած կարկուտի պատճառով գյուղացիական տնտեսություններին հասցված վնասի չափերն ամբողջությամբ գնահատելու և այն փաստարկված կառավարությանը ներկայացնելու համար համապատասխան համայնքներում աշխատանքներ է իրականացրել մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովը, որի ուսումնասիրության արդյունքներն ամփոփվել և ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ըստ ամփոփված տվյալների՝ կարկուտից տուժել է 47 համայնք՝ 37938 հա ընդհանուր մակերեսով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միջնորդություն է ներկայացվել կարկտահարությունից տուժած մարզի Ամբերդ, Աղավնատուն, Դողս և Մրգաստան համայնքներին շուրջ 44 տոննա ցորենի սերմացու տրամադրելու համար:

Աջակցություն է ցուցաբերվել համայնքների հողօգտագործողների կողմից արտադրված կարտոֆիլի, գլուխ սոխի և գազարի իրացման գործընթացին:

Մարզում այս տարի փաստացի մշակվել է 43045 հա հողատարածք, որի ոռոգման համար մատակարարվել է շուրջ 250 մլն խ/մ ոռոգման ջուր: Մարզի համայնքներին կանոնավոր և անխափան ոռոգման ջրով ապահովելու նպատակով միջնորդագիր է ներկայացվել ՀՀ կառավարություն՝ համայնքներում խորքային հորեր հորատելու, իսկ եղածները վերականգնելու համար: Մարզում ոռոգման ջրի խնդիրը լուծելու նպատակով աշխատանքներ են տարվում ջրամբարաշինության ուղղությամբ: Արդեն սկսվել են Սելավ-Մաստարա ջրամբարի տեխնիկատնտեսական ուսումնասիրության և նախնական նախագծային աշխատանքները: Ուսումնասիրության փուլում է նաև Տանձուտ-Արգավանդ համայնքների միջնամասում նախատեսվող ջրամբարաշինության ծրագիրը:

Մշտական հսկողություն է սահմանվել ոռոգման ջուրը ժամանակին և համաչափ մատակարարելու ուղղությամբ (հատկապես Սևանա լճից բաց թողնվող ջրի նկատմամբ): Խնդիրը մշատական հսկողության տակ պահելու նպատակով մարզպետի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Էջմիածին ՋՕԸ-ի, մարզպետարանի և համայնքապետարանների աշխատակիցների մասնակցությամբ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աշխատանքներ են տարվում մարզում անասնապահության զարգացման, թռչնաֆաբրիկաների վերագործարկման, սպանդանոցների հիմնման ուղղությամբ: Գյուղատնտսության նախարարության հետ համատեղ աշխատանքներ են տարվում 2019 թվականի պիլոտային ծրագրի շրջանակներում ոլորտի ապահովագրության և գյուղատնտեսական կուլտուրաների մշակության փոփոխման ուղղությամբ:

Տեղական ինքնակառավարում և հանրապետական գործադիր մարմիններ

- ***Համայնքներում և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումներում այսուհետ գերակայելու է միայն օրենքը***

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետը ճանաչողական այցով եղել է մարզի ավելի քան 60 համայնքում: Համայնքներում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում արձանագրվել են բնակիչների կողմից բարձրացված հարցերը, հավաքագրվել են համայնքների հիմնախնդիրները, որոնք առաջիկայում կվերլուծվեն և կներկայացվեն պատկան գերատեսչություններին՝ համապատասխան ընթացք տալու նպատակով:

Վերջին երեք ամիսներին մարզում կայացել է թվով 28 համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ, որոնց մասին նախապես հայտարարվել է մարզպետարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աջակցություն է ցուցաբերվել մարզային զինկոմիսարիատին, հատկապես նախազորակոչային տարիքի պատանիների կցագրման աշխաանքներին և 2018 թվականի ամառային զորակոչի կազմակերպմանը: Համախմբված աշխատանքի արդյունքում զորակոչի պլան-առաջադրանքը կատարվել է 105 %-ով:

Հրավիրվել և անցկացվել է մարզային զորակոչային հանձնաժողովի 2 նիստ: Արմավիր, Վաղարշապատ (Էջմիածին) և Մեծամոր համայնքներում այլընտրանքային ծառայություն անցնող անձանց վերաբերյալ հավաքվել և ամփոփ տեղեկատվություն է ներկայացվել Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Առողջապահություն

- ***Հանրային առողջապահության համակարգի ներդրում, բուժհաստատությունների պայմանների և բուժաշխատողների մասնագիտական որակների շարունակական բարելավում***

ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը մշտադիտարկում է իրականացնում մարզպետարանի ենթակայությամբ գործող բուժհաստատություններում՝ ոլորտում առկա խնդիրներն ու թերացումները բացահայտելու և դրանց հետագա կրկնությունը բացառելու նպատակով:

Աշխատանքներ են տարվում մարզպետարան և այլ հաստատություններ դիմած մարզի բնակիչների հետ՝ իրենց իրավունքներին առավելագույնս տեղեկացված լինելու ուղղությամբ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ստեղծված բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի կողմից քննարկվել և անվճար բուժման ու դժվարամատչելի հետազոտությունների է ուղեգրվել 31 հիվանդ:

Նշված ժամանակահատվածում բուժհիմնարկներում աշխատանքի տեղավորման խնդրանքով մարզպետին է դիմել 17 քաղաքացի: Բոլոր դիմումները քննարկվել են օրենքով սահմանված կարգով, և քաղաքացիներին տեղեկացվել է իրենց դիմումների ընթացքի մասին:

Ամփոփվել և Առողջապահության նախարարություն է ուղարկվել մարզի բուժհաստատությունների՝ այս ժամանակահավածն ընդգրկող հաշվետվությունները:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության բոլոր բուժհաստատություններն ապահովված են եղել անհրաժեշտ քանակությամբ հակափայտացման շիճուկով, օձի հակաթույնով, հակագանգրենոզ շիճուկով, հակափայտացման անատոքսինով, հակակատաղության վակցինայով, արյան պաշարով:

Աշխատանքներ են տարվում մարզում ինֆեկցիոն, ախտաբանաանատոմիական, դատական բժշկության, հոգեկան առողջության ծառայությունների վերակազմակերպման, շտապօգնության մեքենաների ավտոպարկի համալրման, ինչպես նաև Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքում գործող երկու հիվանդանոցների օպտիմալացման ուղղությամբ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սոցիալական ապահովություն

- ***Մեր աշխատանքները պետք է ուղղված լինեն սոցիալական արդարության, հավասար պայմանների հաստատմանը***

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով դրամական օգնություն է հատկացվել սոցիալապես անապահով 190 ընտանիքի՝ 7,825.5.0 հազար դրամի չափով:

ՀՀ վարչապետի՝ «Դպրոցականների 2018 թվականի ամառային հանգստի կազմակերպման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» 09.02.2018 թվականի N 105-Ա որոշման համաձայն՝ 3 հերթափոխով ապահովվել է մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան թվով 303 երեխայի 20-օրյա ամառային հանգստի կազմակերպումը Հանքավանի «Հասմիկ» ճամբարում:

Ի կատարումն Տարածքային կառավարման և զարգացման նախարարի 31.07.2018 թվականի N 01/15.2/5550-18 հանձնարարականի՝ մարզային ենթակայության սոցիալական աջակցության տարածքային մարմիններում նպաստառուների հաշվառման ցուցակների կազմման, հաստատման, ինչպես նաև նպաստառուներին գումարների հատկացման գործընթացների օրինականությունը պարզելու և խախտումներ հայտնաբերելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի 07.08.2018 թվականի N 89 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը ս.թ. օգոստոսի 7-ից 31-ն ընկած ժամանակահատվածում կատարել է փաստաթղթային ուսումնասիրություն Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի ՍԱՏԳ-ներում: Հանձնաժողովն ընտրանքային կարգով այցելել է նաև սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում հաշվառված և ցուցակներում ընդգրկված նպաստառու ընտանիքների բնակարաններ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովը ուսումնասիրություն է կատարել Արմավիրի տարածաշրջանի 8 համայնքների 139 ընտանիքում, Վաղարշապատի տարածաշրջանի 8 համայնքի 103 ընտանիքում և Բաղրամյանի տարածաշրջանի 9 համայնքի 65 ընտանիքում: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Տարածքային կառավարման և զարգացման նախարարին և Քննչական կոմիտեի նախագահին: Միաժամանակ հանձնարարվել է տարածքային գործակալությունների ղեկավարներին՝ քննության առնել տեղեկանքներում առկա դիտողություններն ու բացթողումները և կատարված աշխատանքների մասին համապատասխան տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:

Կրթություն

- ***Ոլորտում առաջնային է ապաքաղաքականացումը և անօրինական երևույթների բացառումը՝ ի շահ կիրթ և մեր հասարակության համար պիտանի սերունդ կրթելու և այդ գործընթացը բարեկեցիկ պայմաններում կազմակերպելու***

2018-2019 ուսումնական տարում մարզում աշակերտների թիվը կազմել է 35575, որից 33336-ը՝ մարզային ենթակայության դպրոցներում:

Այս ուսումնական տարում առաջին դասարան է հաճախել 3658 աշակերտ, որից 3594-՝ը մարզային ենթակայության դպրոցներում:

Մարզում գործում է 61 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4626 սանով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ՀՀ կառավարության 18.02.2016 թվականի նիստի N 6 արձանագրային որոշմամբ սահմանված համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման ժամանակացույցի և գործողությունների պլանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 1-ից մարզի դպրոցներում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է Արմավիրի մարզում գործող երկու հատուկ (օժանդակ) գիշերօթիկ դպրոցները որպես գնահատման կենտրոն վերակազմակերպելու գործընթացը, իսկ հատուկ դպրոցներում սովորող աշակերտները, ըստ նշված որոշման պահանջի, ներառական կրթության ծրագրերում ընդգրկելու նպատակով արդեն հաշվառվել են հանրակրթական դպրոցներում:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով մարզպետին վերապահված լիազորությունների շրջանակում մարզպետարանի ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ներում մարզպետի համապատասխան կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբերն իրականացրել են մշտադիտարկման աշխատանքներ, որոնք հիմնականում ուղղված են եղել առկա թերությունների շտկմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ՊՈԱԿ-ներում առկա թափուր հաստիքների վերաբերյալ տեղեկատվությունը և այդ հաստիքների վերաբերյալ մրցույթների հայտարարություններն ամբողջությամբ հրապարակվել են մարզպետարանի պաշտոնական կայքում (http://armavir.mtad.am/referenceonvacancies/): 2018 թ. հունիս ամսից մինչև օգոստոսն ընկած ժամանակահատվածում մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատանքի տեղավորման խնդրանքով Արմավիրի մարզպետարան է դիմել 224 քաղաքացի: Նրանց մի մասի խնդրանքները բավարարվել է տեղում, մյուսների դիմումներն էլ վերցվել են հաշվառման:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն

- ***Առաջնային է շարունակելու մնալ երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումը***

ՀՀ Արմավիրի մարզում կա շուրջ 14 500 ընտանիք: Վիճակագրական տվյալների համաձայն՝ այդ ընտանիքներից 70,4 %-ն է ոչ աղքատ, սակայն նրանց գերակշիռ մասը հայտնված է կյանքի դժվարին իրավիճակում: Հաշվետու ժամանակահատվածում գնահատվել է շուրջ 300 ընտանիքի կարիք:

Արմավիրի և Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 և N 2 հատուկ (օժանդակ) դպրոցների վերակազմակերպման արդյունքում 151 երեխա ուսումն այժմ շարունակում է՝ ընդգրկվելով ներառական ծրագրերում: Հաշվետու ժամանակահատվածում համապատասխան երեխաների և նրանց ընտանիքների հետ իրականացվել է կարիքների գնահատում, որի արդյունքում պարզ է դարձել, որ երեխաներից 107-ը գիշերել է դպրոցում, 53-ն ունի միջին և ծանր մտավոր ֆունկցիաների խանգարում, և նրանց ներառումը հանրակրթական դպրոցներում պահանջում է անհատական մոտեցում: Այդ երեխաներից 25-ի ընտանիքն էլ գտնվում են ծայրահեղ ծանր սոցիալական վիճակում:

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացված հետևողական աշխատանքի արդյունքում հատուկ (օժանդակ) դպրոցների աշակերտներն ընդգրկվել են մարզի ուսումնական հաստատություններում, իսկ երկու երեխայի համար կազմակերպվել է տնային ուսուցում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ երեխաներն ունեն հատուկ խնամքի կարիք և նրանց ֆիզիկական ու մտավոր կարողությունները զարգացնելու, շփման, ինքնասպասարկման հմտությունները բարելավելու համար խիստ կարևոր է վերականգնողական համակարգված ծառայություններ ստանալը, նրանք ընդգրկվել են Արմավիրի <<Երեխայի զարգացման և վերականգնողական>>, <<Արևածագ>> կենտրոններում և <<Հայ միասնության խաչ>> հասարակական կազմակերպության վերականգնողական և ցերեկային խնամքի ծրագրերում:

Վկայագրվել է 100 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, հաշմանդամություն ունեցող երեխաներին ցուցաբերվել է անհատական մոտեցում՝ իրենց վերականգնողական ծրագրերով նախատեսված համապատասխան սարքերի ձեռք բերման հարցում: Վկայագրման աշխատանքները շարունակվում են, ինչը հնարավորություն կտա առաջիկայում պատշաճ կերպով կազմակերպել հատուկ խմբերում ընդգրկված երեխաների խնամքը:

Աուդիտ

- ***Աուդիտը պետք է իրականացվի մաքսիմալ օբյեկտիվ հիմունքներով՝ աջակցելով կազմակերպությունների գործունեության բարելավմանը***

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ներքոհիշյալ աշխատանքները.

1. ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների ներքին աուդիտի աշխատանքների կազմակերպում:

2. Աուդիտի ենթարկվող օբյեկտների կողմից իրականացվող ֆինանսական բնույթի գործառույթների համապատասխանության գնահատում այդ գործառույթները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին:

3. Հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունների բացահայտման և ճշգրտման ապահովում:

4. Աուդիտի ենթարկվող օբյեկտների կողմից տրամադրվող ֆինանսական բնույթի տեղեկատվության արժանահավատության ու ճշտության գնահատում:

Ներքին աուդիտի 2018 թվականի տարեկան և ռազմավարական ծրագրին համապատասխան թվով 8 պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացվել է ֆինանսական աուդիտ, որոնց արդյունքների մասին կազմված աուդիտորական հաշվետվությունները և եզրակացությունները հրապարակվել են մարզպետարանի պաշտոնական կայքում:

Իրականացված աուդիտի արդյունքում հայտնաբերվել են մի շարք թերությունները և խախտումները համառոտ ներկայացվում են ստորև՝

- ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 15-րդ կետի պահանջների խախտում՝ 1 դեպք,
- ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտում՝ 2 դեպք,
- ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջների խախտում՝ 2 դեպք,
- ՀՀ կառավարության 12.01.2006 թվականի լիազորված մարմինների կողմից պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվական կարգապահության ապահովման կարգը հաստատելու մասին 163-Ն որոշման 13-րդ կետի պահանջների խախտում՝ 1 դեպք,

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 16-րդ կետի պահանջների խախտում՝ 1 դեպք,
- ՀՀ կրթության մասին օրենքի 41-րդ հոդվածի պահանջների խախտում՝ 1 դեպք:

Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներում հայտնաբերված թերությունների և խախտումների արդյունքում 2017 թվականին ավել է հաշվարկվել և վճարվել 54,954.0 հազար դրամ:

Աուդիտորական ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված բոլոր թերությունների և խախտումների մասով ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված նշված խախտումների վերացմանը:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի թվով 1 վարչությունում և 5 բաժիններում ևս իրականացվել է համապատասխանության աուդիտ, որի արդյունքների մասին աուդիտորական հաշվետվությունները և եզրակացությունները ամփոփման փուլում են:

Ֆինանսատնտեսագիտական կառավարում

- ***Մարզպետարանի, մարզի համայնքների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, նախադպրոցական հաստատությունների ֆինանսական և բյուջետային գործընթացների պատշաճ ապահովում***

Մարզում 2018թ. վերջին երեք ամիսներին կատարված աշխատանքների արդյունքում համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել են 137510,6 հազար դրամով՝ 1,8%: Նախորդ տարվա հավաքագրված 1266364,3 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1411929,2 հազար դրամ, այդ թվում՝

- գույքահարկ՝ 571939,1 հազար դրամ
- տեղական տուրքեր՝ 63248,0 հազար դրամ
- վարձակալական վճարներ՝ 82999,2 հազար դրամ
- տեղական վճարներ՝ 353708,7 հազար դրամ

Պակաս հավաքագրում է արձանագրվել հողի հարկի մասով, ինչը պայմանավորված է կարկտահարության արդյունքում հողի սեփականատերերին հատուցված վնասներով:

Հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկված միջոցառումների արդյունքում մարզի 5 համայնքում վարձակալության տրամադրված հողի և գույքի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց 12627,8 հազար դրամ ընդհանուր պարտքից

մարվել է 1449,7 հազար դրամ, իսկ 29 համայնքում հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց 312366,1 հազար դրամ ընդհանուր պարտքից մարվել է 14077,9 հազար դրամ:

Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր

- ***Բաց և թափանցիկ գործելաոճի շարունակական ապահովում***

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է մարզպետի և մարզպետարանի գործունեության հրապարակայնությունը՝ մամլո հաղորդագրություններ, իրավական ակտեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, արձանագրություններ, ծրագրեր, հայտարարություններ և այլ տեղեկատվական բնույթի նյութեր պատրաստելու և մարզպետարանի պաշտոնական կայքի, ֆեյսբուքյան էջի միջոցով, տպագիր և էլեկտրոնային լրատվության միջոցներով տարածելով:

Կազմակերպվել և իրականացվել է մարզպետարանում անցկացվող նիստերի, խորհրդակցությունների, քննարկումների, բանակցությունների, պաշտոնական և աշխատանքային այլ միջոցառումների լուսաբանումը:

Պարբերաբար կազմակերպվող հանդիպումների, հարցազրույցների, ճեպազրույցների միջոցով ապահովվել է մարզպետի և մարզպետարանի այլ պաշտոնյաների կապը ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանվել է ՋԼՄ-ներից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված բոլոր գրավոր և բանավոր հարցումներին, առցանց նամակներին:

Ապահովվել է նաև (այս դեպքում միայն ՀՀ Արմավիր մարզպետարանի կայքի միջոցով) համայնքապետերի որոշումների, կարգադրությունների, ավագանու որոշումների, համայնքային բյուջետային եկամուտների, ծախսերի, զարգացման ծրագրերի, համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության ակտերի և դրանցում արձանագրված խախտումների վերցման վերաբերյալ տեղեկանքների, ինչպես նաև համայնքներին վերաբերող այլ նյութերի հրապարակումը: